

ԵՐԻՏԱԿ ՀԱՄԵՐԳ

| սեպտեմբեր 26 | Կամերային երաժշտության տուն |



2007 թ-ի սեպտեմբերի 26-ին Կամերային Երաժշտության տանը տեղի ունեցած համերգն իր ուրույն տեղը գրավեց երևանյան դահլիճներում կատարվող համերգների կողքին: Համերգի հերոսներն էին միջազգային մրցույթների դափնեկիրներ Անի Աղաբեկյանը /ջութակ/, Լևոն Առաքելյանը /թավջութակ/ և Հայկ Մելիքյանը /դաշնամուր/: Այդ օրվա իրադարձության մասնակիցների խոսքերով համերգի ծրագիրը բարդ էր: Բարդ էր և՛ իր կատարման ձևի մեջ, և՛ ստեղծագործությունները ոճականորեն ճիշտ մատուցելու, և՛ ունկնդրի ականջին դրանք ճիշտ հասցնելու մեջ, քանի որ համերգին հնչեցին 20-րդ դարի երաժշտության պատմության մեջ արդեն վաղուց իրենց տեղը գտած երկու հսկա տրիոներ՝ Դմիտրի Շոստակովիչի թիվ 2 /opus 67/ և Առնո Բաբաջանյանի դաշնամուրային տրիոները:

Համերգը երկու բաժնից էր: Առաջին բաժնում հնչեց Շոստակովիչի տրիոն, որի երաժշտական լեզվի յուրովի ըմբռնումը և շոստակովիչյան ոճին անհատականորեն մոտեցումը տրիոյի կատարումը դարձրին նորովի և թարմ մեկնաբանված: Երաժշտության դրամատուրգիան կառուցված էր հարուստ դինամիկայի, երաժիշտների կողմից գտած ուրույն երաժշտաարտահայտչամիջոցների և կերպարների վառ ցուցադրմամբ, որոնք ընթանում էին տրիոյի բոլոր չորս մասերի ժամանակ: Առաջին մասի բազմակերպար երաժշտությունը կատարողները հասցրին հավաքել մեկ ընդհանուրի մեջ, որը երաժշտական ձևին տվեց հստակ հավաքվածություն և ամբողջականություն: Երկրորդ մասի սկերցոգային բնույթը կատարվեց մեկ շնչով, որտեղ անմիջապես նկատվեց այս երեք երաժիշտների բարձր տեխնիկական հնարավորությունները, որոնք ուղեկցվում էին մասի կերպարների ցայտուն մեկնաբանմամբ: Երրորդ մասի՝ չակոնայի տխուր, հաճախ նաև ողբերգական կերպարը հիմնված էր լարայինների՝ ջութակահարի և թավջութակահարի թեմաների նրբագեղ կատարման վրա, որոնք զուգորդվում էին դաշնակահարի հաստատուն ակորդներով: Երրորդ մասին ատակայով հաջորդող չորրորդ մասի, ֆինալի բազմաբնույթ թեմաները երաժիշտները կատարեցին ոճականորեն և երաժշտականորեն ճիշտ կառուցված ձևի մեջ: Երաժշտությունը հասցնելով մինչև կուլմինացիոն բարձունք՝ կատարողները տրիոն բերեցին մեկ ընդհանուր գաղափարի և դրամատուրգիայի արդարացված մեկնաբանման:

Երկրորդ բաժնում հնչեց Բաբաջանյանի եռամաս դաշնամուրային տրիոն: Այս տրիոն արտիստները կառուցեցին էմոցիոնալ մեծ ալիքի միջոցով: Առաջին մասի աննկարագրելի երաժշտականությամբ օժտված թեմաները կատարվում էին թեթևությամբ և կարծես շնչում էին՝ բացահայտելով կատարողների վառ անհատականությունը: Երկրորդ մասի թեմաները կատարվեցին նուրբ քնարականությամբ և մասին հաղորդեցին լուսավոր, խաղաղ, նաև խորհրդավոր

բնույթ: Եռյակի կատարման մի ամբողջ էնոցիոնալ, արտիստիկ ու երաժշտականության կոմպլեքս էր զետեղված երրորդ մասում՝ ֆինալում: Այստեղ կրակոտ կերպարը կատարվեց ռիթմիկ ցայտուն իմպուլսով, հակադրելով մեկ ուրիշ, քնարական և լավատեսությամբ բնորոշվող թեմային: Թեմաների կոնտրաստայնության վառ ցուցադրումը այս երկու տրիոններին տալիս էին ինքնատիպ, հետաքրքիր, անսպասելի և թարմ հնչողություն, ինչպես նաև նորովի արդարացված մեկնաբանման փայլուն օրինակ:



Համերգի ցնցված ունկնդիրը ոտնկայս ծափահարում էր և երկար ժամանակ բաց չէր թողնում արտիստներին հեռանալ բեմից: Եռյակը, կարծես կռահելով դահլիճի պահանջը, կատարեց Աստոր Պիացոլայի “Verano Porteno” տանգոն՝ փոխադրված հատուկ դաշնամուրային տրիոյի համար: Ոգևորված դահլիճը արտիստներին բուռն ծափահարություններով ուղեկցեց դեպի ետնաբեմ՝ իր մեջ պահելով համերգից ստացված միանգամայն դրական և տաք լիցքերը: